

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/2

4 սեպտեմբերի 2012թ.

Քննարկվեց <Գեմբագս> ՍՊԸ 27.08.2012թ. թիվ 10 գանգատը «ԿԱ ՊԵԿ Նաիրիի ՏՀՏ 06.08.2012թ. թիվ 1102066 ստուգման ակտի դեմ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 13.07.2012թ. թիվ 1102066 հանձնարարագրի «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Գեմբագս> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 28.10.2011թ-ից մինչև 26.07.2012թ. ընկած ժամանակաշրջանը: Ստուգման արդյունքում 06.08.2012թ-ին կազմվել է «ԿԱ ՊԵԿ Նաիրիի ՏՀՏ թիվ 1102066 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ Նաիրիի ՏՀՏ ստուգումների բաժնի գլխավոր հարկային տեսուչ Աբրահամ Մարտիրոսյանս, Սերյոժա Կիրակոսյանս և հարկային տեսուչ Վահան Սևինյանս «ԿԱ ՊԵԿ նախագահի 13.07.2012թ. թիվ 1105066 հանձնարարագրի համաձայն կատարեցինք <Գեմբագս> ՍՊԸ-ին պատկանող ք.Երևան, Խորենացի 24 հասցեում գտնվող առևտրի տաղավարից ՀԴՄ կիրառման ճշտության ստուգում:

Ստուգումից պարզվեց, որ ընկերության կողմից 25.07.2012թ. ժամը 14:24-ին վաճառվեց 136 գրամանոց արծաթյա բաժակակալ 137000 դրամ գումարով, որի դիմաց վաճառողուհի Լուսինե Մարգարյանի կողմից տրամադրվեց ՀԴՄ կտրոն 137.000 դրամի: 26.07.2012թ. ժամը 14:50-ին գնված բաժակակալը փոխանակվեց 1 արծաթյա օղու բաժակի հետ 12000 դրամ հավելավճարով, ընդհանուր արժեքով 149.000 դրամ: Տարբերության գումարը՝ 12000 դրամ, չմուտքագրվեց ՀԴՄ և վաճառողուհի Լուսինե Սարգսյանի կողմից ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այսուհետ ժամը 15:07-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվություն՝ 0 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 12000 դրամը, ժամը 15:07-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և նորից դուրս բերվեց <Z> հաշվետվությունը՝ 12000 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են «Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները: Արդյունքում տնտեսվարող սուբյեկտին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» «Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 300.000 դրամի չափով:

<Գեմբագս> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

1. Նախ նշենք, որ նույնիսկ ստուգման ակտում նշված է, որ ընկերությունը 25.07.2012թ. ժամը 14:24-ին վաճառված 136 գրամանոց արծաթյա բաժակակալի վաճառքի ժամանակ տրամադրել է ՀԴՄ կտրոն: Հետևաբար, ընկերության մոտեցումն այն է, որ անհրաժեշտ է պահպանել օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Իրականությունը հետևյալն է.

25.07.2012թ. ք.Երևան, Խորենացի 24 հասցեում գտնվող առևտրի տաղավարից անհայտ տղամարդու կողմից ձեռք է բերվել 136 գրամանոց արծաթյա բաժակակալ, որի դիմաց տրամադրվել է ՀԴՄ կտրոն: Հաջորդ օրը նույն տղամարդու հետ ներկայացել է նաև անհայտ կին՝ ներկայանալով այդ տղամարդու կինը, և խնդրել են բաժակակալը փոխանակել: Բաժակակալը փոխանակվել է օղու բաժակի հետ: Սակայն խնդրել են վաճառողուհուն, որ փոխանակված բաժակը ցույց տան նաև իրենց ընկերոջը, որը գտնվում է ներքևի հարկում՝ կարծես թե սրճարանում, որից օգտվելու գումարը դեռ չեն վճարել, և, 12000 դրամ թողնելով սեղանին, արագ հեռացել են:

Կարծում ենք, որ բոլորին էլ պարզ է, որ վաճառքով զբաղվելու դեպքում, վաճառք իրականացնողները փորձում են առավել ներողամիտ գտնվել իրենց հաճախորդների նկատմամբ

և շատ դեպքերում հարմարվել նրանց քմահաճություններին: Նշված դեպքում վաճառողուհին, չհասկանալով իրականում ինչ անի 12000 դրամը, սպասել է, որ նշված անհայտ անձիք, ընկերոջը ցույց տալուց հետո, վերջնական որոշում կայացնեն փոխանակման համար, հետո միայն իրականացնի օրենքով նախատեսված ՀԴՄ կտրոնի տրամադրումը: Նա չէր կարող նույնիսկ ենթադրել, որ այս ամենը վարպետորեն իրականացված բեմադրություն է, որի նպատակն է շփոթեցնելու միջոցով հասնել ՀԴՄ-ի խախտում բացահայտելուն:

2. <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի Հավելված 2-ով հաստատված Հարկային մարմնի կողմից հսկիչ գնումների անցկացման կարգի 1.4 կետով սահմանված է, որ հսկիչ գնումն այլ անձի միջոցով (անձի գրավոր համաձայնությամբ) իրականացնելու դեպքում հանձնարարագրում նշվում են նաև այդ անձի տվյալները:

Տվյալ դեպքում ստուգման ակտում նշված անձանցից ոչ մեկը չի մասնակցել հսկիչ գնմանը, այլ այն իրականացվել է անհայտ այլ անձանց միջոցով (կին և տղամարդ), որոնց վերաբերյալ որևէ տվյալ ստուգման ակտում չկա: Հետևաբար ստուգման ակտով այլ անձանց տվյալների բացակայության մասով խախտվել է օրենքի իմպերատիվ պահանջը: Նշված հսկիչ գնման արդյունքում խախտման արձանագրություն չի կազմվել: Հետևաբար խախտվել են նշված կարգի 1.6 կետով սահմանված պահանջները:

Այսինքն հսկիչ գնումը/ստուգումն իրականացվել է, իսկ ստուգման ակտը կազմվել է <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված կարգի խախտմամբ:

3. Վիճարկվող դեպքերում ստուգող մարմինը վարչական ակտն ընդունել է <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ, հետևաբար ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի <ա> ենթակետի դրույթներով ստուգման ակտը անվավեր է:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ դեպքում ընկերության նկատմամբ ընդունվել է ոչ բարենպաստ վարչական ակտ, հետևապես դրանում տեղ գտած տեղեկությունների ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը, ի դեմս ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց:

Իր հերթին <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն, ստուգման ակտում նշվում են ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, իսկ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն, վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

Ելնելով վերոգրյալից ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից մշակվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման և հսկիչ գնման ռաումնասիրության հանձնարարագրերում արտացոլման ենթակա տվյալների, ստուգումն (ուսումնասիրությունն) իրականացնող պաշտոնատար անձանց կողմից իրականացվող գործողությունների, ինչպես նաև դրանց արդյունքում կազմվող, համապատասխանաբար՝ ստուգման ակտում և արձանագրությունում արտացոլման ենթակա տվյալների (տեղեկությունների) ընթացակարգ, որը ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, հարկային (տարածքային) տեսչությունների պետերին է

ուղարկվել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 02.06.2011թ-ի թիվ 01/4-4/[134013]-11 գրությամբ (այսուհետ՝ շրջաբերական նամակ):

Շրջաբերական նամակի 3-րդ կետի համաձայն. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ՀԴՄ ստուգման հանձնարարագրերի վավերապայմանների նկատմամբ կիրառվում են ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի դրույթները, ուստի, ի թիվս հավելվածում ներառված այլ վավերապայմանների, ստուգման հանձնարարագրում պետք է նշվեն՝

- հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձի (անձանց) տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը).

- հսկիչ գնումն այլ անձի միջոցով (անձի գրավոր համաձայնությամբ) իրականացնելու դեպքում՝ նաև այդ անձի տվյալները>:

Քննարկվող դեպքում ստուգման ակտի 1-ին կետում հիշատակված ապրանքների գնումը կատարվել է ոմն անձանց կողմից, որոնց տվյալները թե ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 13.07.2012թ. թիվ 1102066 հանձնարարագրում, թե ստուգման ակտում նշված չեն:

Վերոգրյալից հետևում է, որ քննարկվող դեպքում խախտվել են «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև շրջաբերական նամակի 3-րդ կետի պահանջները:

Բացի այդ, շրջաբերական նամակի «ՀԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև»-ը բաժնում նշված է, որ վաճառողի կողմից համապատասխան վճարման արժեքը ՀԴՄ չմուտքագրվելու և ՀԴՄ կտրոն չտրամադրելու դեպքում ստուգումն անցկացնող հարկային ծառայողների կողմից ՀԴՄ-ից դուրս է բերվում <Z> հաշվետվությունը, կատարված վճարման արժեքը մուտքագրվում է ՀԴՄ, դուրս է բերվում կտրոն և կրկին անգամ դուրս է բերվում <Z> հաշվետվությունը:

Հիշատակված գործողություններն իրականացվելուց հետո գնված ապրանքները ստուգումն անցկացնող հարկային ծառայողները պետք է ետ վերադարձնեն տնտեսվարող սուբյեկտին, կազմեն համապատասխան արձանագրություն, ինչպես նաև ետ ստանան գնման գումարը և տպեն վերադարձի կտրոնը կատարված վճարման արժեքի չափով:

Քննարկվող դեպքում ստուգման ընթացքում գնված ապրանքները ստուգումն անցկացնող հարկային ծառայողների կողմից տնտեսվարող սուբյեկտին ետ վերադարձվելու, համապատասխան արձանագրություն կազմվելու, գնման գումարը ետ ստանալու և կատարված վճարման արժեքի չափով վերադարձի կտրոն տպելու վերաբերյալ որևէ գրառում ստուգման ակտում կատարված չէ:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ ընկերությունում ստուգումը կատարվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝


ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո թ ո շ ու մ է՝**

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Նաիրիի ՏՀՏ 06.08.2012թ. թիվ 1102066 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ